

VIII.

ԻՐԱԻԱՐԱՆԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինչ ծնունդ է միջանի խօսք ևս ասել հայ-բոշաների հասարակական կեանքի, այլ և իրաւաբանական սովորութիւնների մասին:

Ահիլների (ծերերի) ազդեցութիւնը և հասարակական գործերի մէջ ունեցած ազդեցիկ ու վճռական ձայնի նշանակութիւնը վաղուց անհետացել է և հետզհետէ ամենախուլ կողմերումն իսկ վերջանում է հայ հասարակութիւնների մէջ: Հայ-բոշաների հասարակական գործերում վճիռ տուողները դեռ *ահիլներն* են: Բոշան իր *ահիլներին* շատ պատւում է և յարգում. նրանց ժողովին է ենթարկում իր դատը, նրանց խորհրդին է լսում և ծանր դէպքերում *ահիլներին* է թողուած վճիռ տալու, որին բոշան ամենայն հպատակութեամբ հնազանդում է: Առհասարակ ծերերը մեծ պատիւ են ստանում. անցնելիս՝ բոլոր բոշաները ոտքի են ելնում, խնջոյքի մէջ նրանց ներկայութիւնը չափաւորում է արբեցողութիւնը, կռիւների առաջն է առնում և մի տեսակ պատկառանք տալիս. նրանց ձեռքերը համբուրում են, նրանց առաջ գլուխ խոնարհում: Եւ այդ *ահիլների* միջից է որ ընտրւում է բոշաների ցեղապետ — կառավարիչը, որին այժմ *աթոռակալ* են կոչում և որ հնումն կոչւում էր *ջամադար* (իշխան, ցեղապետ): Աթոռակալը այժմ էլ կատարում է և ունի նոյն իրաւունքները, ինչ որ առաջ. նա է դատ տեսնում, պատիժ սահմանում, այս կամ այն ծանր

Հարցերին վերջնական վճիռը տալով՝ գործադրելու հրամայում: Ո՛չ մի բոշայի մտքովն իսկ չէ անցնում նրա հրամաններին հակառակ գնալ: Բայց աթոռակալը մենակ ո՛չ դատ է տեսնում և ոչ էլ հասարակական այս և այն հարցին լուծումն տալիս. ի հարկէ, թեթեւ, փոքրիկ դէպքերում նա չի դիմում խորհրդի, բայց փոքր ինչ կարեւոր համարուող հարցը նա ենթարկում է *ահիլլների* ժողովին, որ գումարում է նա՝ միմիայն պէտք եղած ժամանակ: Այդպիսի ժողովներ յաճախ ունենում են բոշաները ձմեռը, երբ աթոռակալը հաւաքում է *ահիլլներին* իր տանը և այնտեղ թէ՛ դատեր են տեսնում և թէ՛ հասարակական այլ և այլ գործերով զբաղւում: Աթոռակալութիւնը ժառանգական է, քանի ժառանգ կայ: Երբ սերունդը վերջանում է, *ահիլլներից* ամենասիրելին ընտրւում է աթոռակալ և այդպիսով աթոռակալութիւնը անցնում մի ուրիշ սերունդի: Որպէս աթոռակալը, նոյնպէս և նրա ընտանիքի անդամները մեծ յարգանք են վայելում բոշաների կողմից: Ամէն բան ցոյց է տալիս, որ *աթոռակալը* հնումն, երբ բոշաները միշտ թափառական և վրանաբնակ են եղել, կատարել է ցեղապետի դեր: Այժմ նրա բացարձակ իշխանութեան ոյժը սահմանափակուել է այն տէրութիւնների կողմից, որոնց երկրումն են ապրում բոշաները: Թիւրք կառավարութիւնը, չնայելով որ թողնում է բոշաներին՝ ընտրել իրենց աթոռակալը, բայց ինքն է հաստատում նրան՝ միւղիւր կոչելով և լոկ համայնքի ներկայացուցիչ ճանաչելով՝ առանց իրաւունք տալու, որ նրա դատին ենթարկուէին բոշաների վէճերը: Բացի դրանից, այդ կառավարութիւնը ըստ հաճոյս պաշտօնանկ է անում *աթոռակալին*, երբ չէ կամենում: Չնայելով դրան, բոշան երբէք չէ դիմում տիրող կառավարութեան դատարանին ո՛չ Թիւրքիայում և ո՛չ էլ Կովկասում: Երբէք մի բոշա չէ յայտնուել պետական դատարանում և ո՛չ մի բոշայի խնդրով չէ զբաղուել պետութեան ու է՛ դատաւորը կամ ոստիկանապետը: Ո՛չ մի յանցաւոր բոշա չի եղել բանտերում կամ աքսորուած: Այդ կարելի է ի հարկէ վերագրել և նրան, որ բո-

շաների մէջ ո՛չ մի սպանութիւն և կամ այլ քրէական յանցանք տեղի չէ ունենում: Եղածներն էլ—եթէ երբ և իցէ լինի—իրենց մէջ այնքան ճարպիկութեամբ ծածկում են և միայն աթոռակալի դատին ենթարկում ու նրա վճիռը գործադրում, որ ո՛չ մի անգամ տիրող պետութեան անհանգիստ չեն տրել: Թիւրքիայում, Կովկասում քաղաքի ամէն թաղերի մէջ ոստիկաններ, հսկողներ կան, իսկ բոշաների թաղերում աւելորդ է համարուած այդ անել, որովհետեւ ո՛չ մի անկարգութիւն տեղի չէ ունենում այնպէս, որ պէտք լինի ոստիկանութեան միջամտութիւնը:

Բոշան մեծ ամօթ, մեծ անպատւութիւն է համարում թոյլ տալ, որ տիրող պետութեան դատարանի առաջ ելնէին գործերը կամ ներքին վէճերը: Աթոռակալն է միակը, որ տալիս է վճիռ և ոչ մի բոշա չկայ, որ չհնազանդէր նրան ու դիմէր տիրող պետութեան դատարանին:

Աթոռակալի ընտրութիւնը կրօնապէս էլ հաստատւում է: Երբ մեռնում է նա, նրա որդին կամ եթէ ժառանգ չունի՝ ընտրուած *աջիլին* խմբովին տանում են հոգեւոր կառավարութիւնը, յայտնում որ սա պիտի լինէր նոր աթոռակալը և տեղի հայ առաջնորդը մի պահպանիչով հաստատում է նրան իր պաշտօնում:

Կովկասում, աթոռակալի դերը առ երեւոյթս շատ չնչին է դարձրած: Նա, պետութեան առաջ նկատւում է որպէս հոգեւոր ներկայացուցիչ բոշաների, իսկ իբր քաղաքական ներկայացուցիչ՝ 80-ական թուականներին հաստատուեց մի նոր պաշտօն՝ *ուստաքաշութիւն*:

Ռուս կառավարութիւնը բոշաներին ընդունում է հայ ժողովրդի մի մասը և համարում է նրանց մաղագործ արհեստաւորներ, լուսաւորչական և կրօնապէս ենթարկուած հայ հոգեւոր իշխանութեան: Իսկ իբր որոշ արհեստաւորների համբարութիւն, նրանց առաջադրել է ընտրել իրենց *ուստաքաշին*, որը և վարում է բոշաների թեթեւ դատերը, պարտաւորուելով կառավարութեան դատարանին յանձնել մեծ խնդիրները: Ուրեմն բոշաները նկատւում են Կովկա-

տուժմ որպէս մաղագործների մի համաքարութիւն և հայ ժողովրդի մի մասը, լուսաւորչական եկեղեցոյ պատկանող: Ուստաբաշին է, որ ժողովում է տուրքերը *) և վարելու պարտական է դատերը: Սակայն ոչ մի բոշա չէ դիմում նրան, բացի այն դէպքերից, երբ հարկաւոր է իրաւունք ձեռք բերել մաղ ծախելու և այլն: Դատերը, վէճերը նա շարունակում է աթոռակալի և ահիլների վճռին ենթարկել և ուստաբաշին շարունակում է ճանաչուել որպէս մի աւելորդ պաշտօնեայ: Բոշան ուստաբաշուն չէ սիրում, նրան յակամայից է լսում, նրան համարում է ինքնակոչ դատաւոր և ուստաբաշին յաճախ ստիպուած է աթոռակալին դիմել այս և այն հրամանը գործադրել տալու համար. աթոռակալի խօսքն է միայն լսելի և նա իր կողմից աշխատում է տիրող պետութեան հրամանները կատարել տալ: Ինձ յաճախ պատահել է լսել բարձրաձայն արհամարհանք դէպի ուստաբաշին և նոյն իսկ հայհոյանք. բոշաները, մի խմբի մէջ, փողոցում համարձակ ծաղրելով ասում էին, որ ուստաբաշին մի մեծ լէլէ (էշ) է և որ եթէ աթոռակալի ձայնը չլինէր, նրա ոչ մի խօսքին իրենք չէին լսի. մինչ երբ հարցնում էի աթոռակալի մասին, նրանք իսկոյն լրջանում էին և ամենայն պատկառանք ու յարգանքով էին խօսում:

Աթոռակալը Կովկասում ճանաչուած է պաշտօնապէս իբր առաջնորդական փոխանորդ բոշաների, պտղի ժողովող և կրօնական խնդիրներում միայն խառնուող:

Այդ պաշտօնի համար նա չի վարձատրւում: Նա համարւում է հին բոշայական իշխանների ցեղի սերունդ, բայց ապրում է միւս բոշաների նման. նրա կինն էլ է թափառելու գնում և ինքը աթոռակալն էլ միւսների պէս գիւղերն է իջնում կամ կամ ուռի ճիւղ կամ մաղ բերելու, զբաղւում է միւսների նման մաղ, կողով և այլն գործելով և արտաքինով ոչ մի զանազանութիւն չունի միւս բոշաներից:

Ինչպէս ասացինք, հայ-բոշաների պէս մի հասարակու-

*) Բոշայի մի ընտանիքը վճարում է տարեկան մօտ 10 ռ. տուրք:

Թիւն չկայ հանդարտ, այնքան, որ ոչ մի դէպքում տիրող պետութիւնը չէ միջամտում նրանց գործերում: Ո՛չ յանցանք, ո՛չ խոշոր կռիւներ, ո՛չ մարդասպանութիւն: Եղած վէճերը, թեթեւ կռիւները, այս կամ այն նոյն իսկ ծանր հարցերը վճռում է աթոռակալը և պատիժը գործադրւում է այնքան հպատակօրէն, այնքան լուռ, որ կարծես այդ ժողովրդի մէջ դարերից ի վեր չէ եղել ո և է ոճիր կամ գողութիւն կամ այլ յանցանք:

Ծնողական իշխանութիւնը նոյնքան ազդեցիկ է, որքան տհիւններինը. որդին կուրօրէն հնազանդում է հօրը: Տան մէջ տնտեսական, ամուսնական և այլն խնդիրներում թէև մայրական իշխանութիւնն է վճռական, բայց բոշա կիներ նոյնպէս կուրօրէն հպատակում է ամուսնուն, տալիս է նրան իր բոլոր վաստակը, հանդուրժում է որ նա նոյն իսկ չգործի և երբեմն իսկ վայրենաբար ծեծի իրեն: Այդ վարմունքը նա բնական է համարում միշտ:

Մայրական իշխանութեան մնացորդներից հետաքիքիր է այն, որ յաճախ մի բոշայի ճանաչեցնելու համար չեն կոչւմ նրան հօր անունով, այլ մօրը. օրինակ չեն ասում Փանոսի տղայ Թորոսը, այլ աւելի ճիշտ հասկացնելու համար՝ Վարդերի տղայ Խաչօն կամ Սիմիկի տղայ Սեղբոսը *): Որդին անպայման կերպով աւելի լսում է մօրը քան հօրը, աւելի ուշադրութիւն է դարձնում և աւելի յարգում մօրը, թէև վախենում է հօրից: Սաստիկ վախենում են ծնողական անէծքից, մանաւանդ մօր անէծքից:

Սակայն բոշա կիներ, կէս նստական կեանք վարող բոշա-

*) Բոշաների անուններ. տղամարդկանց՝ — Սեղբոս, Թորոս, Գիւօր, Խաչօ, Փանուէլ. կանանց՝ Շուշան, Մարօ, Վարդեր, Սրբուն, Անթառ, Սիմիկ, Մայամ, Մարինոս: Վերջերս բոշաները կամենալով կապեր ունենալ հայերի հետ՝ իրենց տնտեսական շահերի համար՝ ընտրում են նրանցից կնքահայր, բացի դրանից, հայ քահանան էլ բռնուած լինելով թիթու ազգասիրական ախտով՝ աշխատում են հայկական անուններ դնել մկրտուող մանուկներին:

ների հասարակական գործերում ոչ մի ձայն չունի, նա միայն խառնւում է տան գործերին և տնտեսական շահերի մէջ: Չնայելով դրան, յաճախ է պատահում որ տիրող կառավարութեան մօտ ունեցած մի խնդրի համար, բոշա տղամարդիկ իրենց կանանց են առաջ ձգում և դա հասկանալի պատճառներով. թիւրք կառավարութիւնն իսկ խուսափում է խստութեամբ վարուել կանանց հետ և շտապում է նրանց խնդիրը կատարել:

Որպէս կէս նստակեացների, այնպէս և թափառականների մէջ այս ոռվորութիւնները նույնութեամբ կատարւում են: Թափառականների մէջ աթոռակալի, ահիլների և մայրական իշխանութիւնը շատ աւելի շեշտուած է և ակներև: Նրանց մէջ տեղի են ունենում հասարակական ընդհանուր ժողովներ, որոնց մասնակցում են կանայք, ձայն ունին և որոնց մէջ է վճռւում թափառելուն վերաբերեալ հարցեր և գնալիք երկիրները: Թափառական բոշաների կեանքը դեռ մնում է աւելի մանրամասն ուսումնասիրութեան կարօտ և եթէ ինձ յաջողուեց այդ, նաև եթէ ձեռք բերի իմ շարունակուող հետազօտութիւններից նոր արդիւնք, կաշխատեմ այս գործին աւելացնել մի յաւելուած մօտիկ ժամանակներում:

Բոշան հող չունի, բոշան թափառական է, անտուն, անտէր: Նա թռչունի պէս է տալրում և օրէ օր, բայց այդ դեռ չէ նշանակում որ նա արհամարհում է և չէ ձգտում հաստատուել մի տեղ: Ծշմարիտ է, կատարեալ թափառական բոշան մինչև իսկ առած է դարձրել թէ «Ծշմարիտ բոշան պիտի թափառի», բայց Հայաստանի զանազան կողմերում կէս նստակեաց բոշաների մէջ վաղուց է մտել ձգտում հող ունենալու և երկրագործութեամբ զբաղուելու: Բոշաների այդ ցանկութիւնը այնքան խոր բնաւորութիւն է ստացել այժմ, որ նրանց միակ երազը հող ունենալն է:

— Հող, հող... կանչում են նրանք և քանիցս արդէն դիմումներ են արել տիրող կառավարութիւններին այդ մասին: Սակայն միշտ նրանց առաջարկել են անբերրի, քարոտ, անպիտան հողեր և բոշան, որ դեռ վարժ չէ և երբէք արօրի ձեռք չէ խփել, յուսահատւում է, ուժ չէ զգում իր մէջ աշխատանքը գործադրելու անբերրի քարոտ տեղերի վրայ:

Եւ այդ ընդունակ, սրամիտ, տոկուն ժողովուրդը հակառակ իր այժմեան ցանկութեան, ոչ հող ունի և ոչ էլ տուն ու տեղ: Այդ հանգարտ, օրինակելի խաղաղ և հեզ ժողովուրդը ձգտում է նստակեաց կեանք վարելու, արօրի ձեռք խփելու, բայց տարիներից ի վեր նրա խնդիրները, նրա աղաչանքը ապարդիւն են անցել. նա սկսել է հոսկանալ որ իր թափառական կեանքը այժմ մանաւանդ, պատճառում է իրեն շատ դառնութիւններ. նա ուզում է հայրենիք ունենալ, հողին կապուել, ազատուել արհամարհանքից, ծաղրից, ձգտում է քաղաքացիական իրաւունքներ ձեռք բերելու և չունի ո՛չ մի կողմից օժանդակող, ո՛չ մի կողմից իր վրայ ուշադրութիւն դարձնող:

Ի զուր է կարծել, թէ «բոշայից փաշա չի դուրս գալ»: Փաստերը ապացուցանում են, որ նրանցից դուրս են եկել ո՛չ միայն աշխարհաչակ արտիստներ, հրապարակախօսներ, այլ նոյն իսկ հայերի մէջ յայտնի կրօնաւոր, յայտնի գիտնական: Ալամդարեան վարդապետը, պրօֆ. Պատկանեանը, հայ յայտնի գրողներից մի քանիսը բոշաներից են սերուած. իսկ Եւրոպայում, գեղարուեստի պատմութեան մէջ տեղ բռնած յայտնի կին ջութակահար Պաննան (Աննա), ջութակահարների արքայ Բիխարի, հռչակաւոր նկարիչ Անտօնիօ Սօլարի և այլն բոշաներից էին սերուած:

Այս բոլորը ապացուցանում է, որ բոշայական ազգը մի թարմ, ընդունակ հասարակութիւն է, որ երբ հաստատաբնակ դառնայ, երբ միջոցներ ունենայ իր տնտեսական կեանքը ամուր հիմքերի վրայ դնելու, հետեւելու քաղաքակր-

Թուլթեան—նա կարող է տալ մարդկուլթեան օգտակար ան-
դամներ:

Իսկ այս դրուլթեան մէջ, չի անցնիլ մի 50 տարի ևս
և ոչ միայն նրա ինքնատիպուլթիւնից, այլ և նրա լեզուից
ոչինչ չի մնալ. նա կ'ընկճուի զօրեղ հանգամանքների ա-
ռաջ. չի ձուլուիլ, ոչ, բայց կ'ոչնչանայ, միայն մի պատմա-
կան հետք թողնելով իր ետեւից, լոկ էտնոգրաֆիային հե-
տաքրքրող մի հետք...

